ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2023 թվականի հունվարի 26-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/09»

«Երևանի պետական համալսարան» Հիմնադրամի կարիքների համար ինտերակտիվ էկրանների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/09 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 25.01.2023թ. ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 26.01.2023թ. տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրում N 1 Եթե ինտերակտիվ էկրանի պրոցեսորների բնութագրերում՝ «CPU: 4-core A76 (2.2G) + 4-core A55 (1.8G) - CPU frequency: 2.2 GHz» արդեն նշված են պրոցեսորների անհրաժեշտ հաճախականությունները՝2.2G և 1.8G, ապա այդ դեպքում ինչի՞ն է վերաբերվում «2.2 GHz» ցուցանիշը: Շնորհակալություն:

Պարզաբանում N 1 Քանի որ (2.2G) հնարավոր է հասկանալ որպես պրոցեսորի սերունդ, ուստի առանձին նշվել է<<2.2 GHz>> ցուցանիշը՝ որպես պրոցեսորի հաճախականություն: Միաժամանակ հայտնում ենք, որ վերը նշված երկու ցուցանիշները նույնն են, տարբերվում է դրանց գրառման ձևը:

Հարցադրում N 2 Բարև Ձեզ. Խնդրում եմ պարզաբանել՝ - Ինչի՞ն է վերաբերվում Scan rate – 200 Hz բնութագիրը՝ LCD էկրանի՞ն թե ինտերակտիվ համակարգի՞ն. - Ինչպե՞ս հասկանալ «Օբյեկտի ճանաչելիության չափը / Recognizable object: 5 points 2mm» բնութագիրը, որտեղ նշված են 2 իրար հետ չառնչվող ցուցանիշներ (բանակ ՝5 կետ և չափս՝ 2 մմ). Կանխավ շնորհակալություն:

Պարզաբանում N 2 Scan rate – 200 Hz վերաբերվում է ինտերակտիվ համակարգին, Իսկ օբյեկտի ճանաչելիության չափը / Recognizable object: 5 points 2mm/ կարելի է հասկանալ, որ ինտերակտիվ էկրանը հնարավորություն է տալիս միաժամանակ կատարելու 5 հպում 2 մմ չափ ունեցող սարքավորումով:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/09» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Ա. Մակարյանին:

Հեռախոս՝ 060710013:

Էլեկտրանային փոստ՝ gnumner@ysu.am:

«ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/09» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի

Հանձնաժողովի

Նախագահ՝ Ա. Առուստամյան _____
ստորագրություն

Անդամներ՝ Տ. Առաքելյան _____
ստորագրություն

Ա. Սարգսյան _____
ստորագրություն

Արձանագրություն N 2

«ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/09» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի եղանակով ԵՊՀ կարիքների համար ինտերակտիվ էկրանների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 26.01.2023թ.

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Ա. Առուստամյան՝ (Գնահատող հանձնաժողովի նախագահ),

հանձնաժողովի անդամներ՝

Տ. Առաքելյան՝ (Գնահատող հանձնաժողովի անդամ),

Ա. Սարգսյան՝ (Գնահատող հանձնաժողովի անդամ),

հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Մակարյան՝ (Գնահատող հանձնաժողովի քարտուղար):

1.Էլեկտրոնային աճուրդի եղանակով գնման ընթացակարգի շրջանակներում հրավերի պարզաբանման տեքստը հաստատելու մասին

1.1 Հիմք ընդունելով 2023 թվականի հունվարի 25-ին հրավերի վերաբերյալ ստացված հարցումները և, ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 14-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ հանձնաժողովը որոշեց՝

- Հաստատել հրավերի պարզաբանման մասին հայտարարության տեքստը և հրապարակել գնումների պաշտոնական տեղեկագրում

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների և քարտուղարի անունը

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել էլեկտրոնային աճուրդի ավարտից հետո:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Ա. Առուստամյան _____ ստորագրություն

Անդամներ՝ Տ. Առաքելյան _____ ստորագրություն

Ա. Սարգսյան _____ ստորագրություն

Քարտուղար՝ Ա. Մակարյան _____ ստորագրություն